«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թ. դեկտեմբերի 15-ի նիստի (էլեկտրոնային նամակագրությամբ)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի հիմնադրամի (այսուհետ՝ ՀԽ) նիստը կայացավ առցանց:

Առցանց նիստին վերաբերող նյութերը 2023 թ, դեկտեմբերի 13-ին ուղարկվել են հոգաբարձուների խորհրդի 20 (քսան) անդամներն.

1. Կարեն Թոչունյան –Կ.գ.դ., պրոֆեսոր,
2. Նազելի Բաղդասարյան – ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
3. Արթուր Շատվորյան-ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,
4. Արտուր Մովսիսյան-ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,
5. Արթուր Պապիկյան - Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,
6. Լևոն Բարսեղյան - Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ,
7. Ջոն Կարապետյան-ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն,
8. Արմեն Թումասյան-«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանիֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ավագ գիտաշխատող,
9. Բագրատ Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն:
10. Ալեքսան Տեր-Մինասյան – «Ֆյուր Արմենիեն» հիմնադրամի տնօրեն,
11. Լուսինե Գևորգյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
12. Վարդան Մանուկյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
13. Աիդա Գարեգինյան-«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտություններիֆակուլտետի դոցենտ,
14. Աշխեն Տոնոյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոս,
15. Անահիտ Վալեսյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
16. Լիլիթ Ավետիսյան-«ՇՊՀ»հիմնադրամիհասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
17. Մերի Դավթյան -«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանող,
18. Քրիստինե Առաքելյան- «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
19. Գևորգ Ղուկասյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
20. Հովիկ Գալոյան- «ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանող:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

1. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակում հաստիքների վերանվանման հարցը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2023 թվականի թիվ 216-Ն որոշումը՝ առաջնորդվելով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 19-րդ ենթակետով: ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդում քննարկելու և հաստատելու հարցը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Լ.Բարսեղյանը էլեկտրոնային նամակով ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի 20 անդամներին ներկայացրել է ՇՊՀ ռեկտոր Ե.Սերոբյանի նամակը.

«Խնդրում եմ երկօրյա ժամկետում ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակում հաստիքների վերանվանման հարցը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2023 թվականի թիվ 216-Ն որոշումը՝ առաջնորդվելով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 19-րդ ենթակետով:

Կից ներկայացնում եմ.

1. ՀՀ Կառավարության 2023 թվականի թիվ 216-Ն որոշման հղումը՝

   https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174349

2. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակում հաստիքների վերանվանման մասին որշման նախագիծը:

Հարգանքով՝ ՇՊՀ-ի ռեկտոր Ե.Ս.Սերոբյան:»

Հեռավար նիստ է հրավիրվում էլեկտրոնային քվեարկության դնելով նշված նախագիծը հաստիքային միավորների վերանվանման մասին:

Մինչև 2023 թ. դեկտեմբերի 14-ը երեկոյան ժամը 17:00-ը սահմանվում հնարավոր հարցերի ժամկետ: Դրանց պատասխանելու ժամկետ՝ մինչև դեկտեմբերի 15-ը ժամը 14:00-ը: Որոշմանը քվեարկելու վերջնաժամկետ սահմանվում եմ դեկտեմբերի 15-ը ժամը 16:00-ն: Ովքեր հարցեր չունեն, կարող են քվեարկել, երբ կամենան՝ մինչեւ դեկտեմբերի 15-ը ժամը 16:00-ը:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝17 (Ա.Գարեգինյան, Ա.Տոնոյան, Ա.Վալսեյան, Լ.Ավետիսյան, Վ.Մանուկյան, Հ.Գալոյան, Ա.Պապիկյան, Ք.Առաքելյան, Լ.Գևորգյան, Ա.Մովսիսյան, Լ.Բարսեղյան, Ա.Թումասյան, Ա. Տեր-Մինասյան, Գ.Ղուկասյան, Մ.Դավթյան, Ջ.Կարապետյան, Բ.Ենգիբարյան)
Ձեռնպահ՝-0, Դեմ՝-0

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2023 թվականի թիվ 216-Ն որոշմամբ և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

կանոնադրության 41-րդ կետի 19-րդ ենթակետով՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերանվանել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակում հետևյալ հաստիքները՝ պահպանելով նախկին հաստիքային միավորի դրույքաչափը.

Ա. Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնում՝

1. «Համակարգչային օպերատոր» հաստիքային միավորը վերանվանել «Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ»,
2. «Գործավար (դպրոցների)» հաստիքային միավորը վերանվանել «Գործավար (դպրոցների անձնակազմի կառավարման մասնագետ)»:

Բ. ՇՊՀ ավագ դպրոցի վարչական միավորներում՝

1. «Բաժնի պետ-տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով» հաստիքային միավորը վերանվանել «Բաժնի պետ-տնօրենի տեղակալ»,
2. «Բաժնի պետ-տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով» հաստիքային միավորը վերանվանել «Համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների»:

Գ. ՇՊՀ ավագ դպրոցի մանկավարժական հաստիքներում՝

1. «Զինղեկ» հաստիքային միավորը վերանվանել «Նախնական զինվորական պատրաստության և (կամ) անվտանգ կենսագործունեության ուսուցիչ (զինղեկ)»:

Դ. ՇՊՀ հիմնական դպրոցի մանկավարժական հաստիքներում՝

1. «Զինղեկ» հաստիքային միավորը վերանվանել «Նախնական զինվորական պատրաստության և (կամ) անվտանգ կենսագործունեության ուսուցիչ (զինղեկ)»:

Ե. ՇՊՀ-ի դպրոցների մասնաշենքի սպասարկող անձնակազմում՝

1. «Տնտեսվար» հաստիքային միավորը վերանվանել «Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ»:

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝Լ. Բարսեղյան _____

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝Ա. Վալեսյան_____